ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Շեգունց ____

«28» 08 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Գորիսի թիվ 4 ավագ դպրոց, XII դասարան / Տնտեսագիտական 2/**

Ուսումնական հաստատության անվանումը, դասարան

**Գալուստ Էդիկի Հակոբյան**

Դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023-2024 ուստարի

## ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Աշխատանքի ուղղվածությունը | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|
| | Կազմել աշակերտների անվանացանկը, դասարանի սոցիալական անձնագիրը: Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանը: Անցկացնել ծնողական ժողովներ: Կատարել դասալսումներ, վերհանել առկա խնդիրները: | Հետևել համավարակի պայմաններում սահմանված կանոնների պահպանմանը: Կատարել այլ պլանավորված աշխատանքներ: Օգնել դասարանական խորհրդին աշխատանքների կամակերպման գործում: Ստուգել աշակերտների բացակայությունները, վերահսկել հաճախումները: Մշտապես ամուր կապ պահել ծնողների հետ: Կատարել դասալսումներ: Անհրաժեշտությունից ելնելով` հրավիրել ծնողական ժողովներ: | Հետևել կարգապահությանը, պարբերաբար կապի մեջ լինել ծնողների հետ, հետաքրքրվել սովորողների առողջական վիճակով, հեռավար կազմակերպել և անցկացնել դաստիարակչական ժամերը: Ստուգել աշակերտների բացակայությունները և վերահսկել հաճախումները: Ապահովել կապը դասավանդող ուսուցիչների հետ, վերհանել ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրները: Կատարել դասալսումներ, դրանք ծառայեցնել նպատակին: Անցկացնել ծնողական ժողովներ: | Ստուգել աշակերտների մասնակցությունը և պատրաստվածությունը դասին: Հետևել կարգապահությանը: կատարել դասալսումներ, հեռավար անցկացնել դաստիարակչական ժամեր, հրավիրել ծնողական ժողովներ: |

## ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Աշխատանքի ուղղվածությունը | Հունվար,փետրվար | Մարտ,ապրիլ | Մայիս | Հունիս |
|---|---|---|---|---|
| Կազմակերպչական | Դասղեկի աշխատանքային պլանի կազմում: Ստեղծել դասարանական և ծնողական խորհուրդներ և հաստատել: Ստուգել աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսին: | Դասղեկական ժամերի անցկացում, աշակերտների հաճախումների ստուգում, համապատասխան միջոցառումների նախաձեռնում դժվար դաստիարակվող աշակերտների հետ աշխատելու համար: | Վերահսկել աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսին, հետևել հաճախումներին և կատարել դասալսումներ: Անցկացնել դասղեկական ժամեր՝ դասացուցակով նախատեսված ժամերին: | Անցկացնել դասղեկական ժամեր՝ դասացուցակով նախատեսված ժամերին: Ռազմահայրենասիրական զրույցներ տանել աշակերտների՝ հատ կապես տղաների հետ: |
| Ուսումնա-դաստիարակչա-կան | Ուսումնա-դաստիարակչական նպատակով հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: | Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) : | Օրինակելի վարք և բարձր առաջադիմություն ունեցող սաներին խրախուսելու մասին զեկուցագիր է ներկայացնել տնօրենին. | Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: |

## Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկզբին

1.Կազմել աշակերտների անվանացանկը,գրել դասացուցակը և տրամադրել փոխտնօրենին /սեպտեմբերի 1-ին, 2-րդ շաբաթ/:

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների լրացուցիչ կրթության հաստատություններում մասնակցության մասին:

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանը:

### Ամենօրյա աշխատանք

1.Հետևել կարգապահությանը:

2.Հետևել հերթապահությանը դասարանում:

3.Հետևել կորոնավիրուսային հիվանդության կանոնների պահպանմանը:

### Ամենշաբաթյա աշխատանք

1. Ստուգել աշակերտների օրագրերը:
2. Անցկացնել դասղեկական ժամեր:
3. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ:

### Ամենամսյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին:
2. Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը:
3. Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում:
4. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից,ախտորոշման այլ միջոցներից,դրանք նպատակատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

# Դաստիարակչական աշխատանք

| N | Գործառույթները | Նպատակն ու խնդիրները | Ուղղվածությունը |
|---|---|---|---|
| 1. | Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ: | Դասարանական կոլեկտիվի ձևավորում: | Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում,հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ:Դասեր ՝ձվիրված երկրին, քաղաքին: |
| 2. | Կազմակերպչական գործառույթ: | Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում: | Ինքնուրույնության ձևավորում,ինքնակազմակերպման խնդիրների հաղթահարում: |
| 3. | Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ,որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը: | Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում: | Էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր: |
| 4. | Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում: | Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում: | Վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: |
| 5. | Պլանավորման, ծրագրման գործառույթ: Կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը: | Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ , ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում:Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում, աշակերտների ստեղծագործական, հասարակական գործունեության կազմակերպում: | Տարբեր խմբակների, զրույցների, բանավեճերի կազմակերպում:Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում: |

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

1.Ինչպե՞ս հաճախել դպրոց համավարակի պայմաններում և ինչպե՞ս ճիշտ պաշտպանվել :
2.Դասղեկ- աշակերտ հարաբերությունների կազմակերպումը և ակնկալվող արդյունքները:
3.Ծնող- ուսուցիչ հարաբերությունների կազմակերպումը և ակնկալվող արդյունքները:
4.Աշակերտի արտաքին տեսքի համապատասխանությունը ժամանակակից ուսուցման գործընթացին:
5.Սթրեսը որպես ուսումնական գործընթացը խանգարող միջոց:
6.ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում:
7.Ծնողների հարաբերությունների, տանը տիրող մթնոլորտի ազդեցությունը երեխայի աշխարհայացքի ձևավորման և զարգացման վրա:Երևույթի ազդեցությունը ուսումնական պրոցեսի վրա:
8.Ախտահանիչ հեղուկների օգտագործումը որպես համավարակի դեմ պայքարի միջոց, դիմակի ճիշտ կրում:
9.Աշակերտի սննդակարգ:Սննդի ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա:
10.Վնասակար սովորություններ, դրանց ազդեցությունը:
11.Ուսումնական գործընթացի վրա ազդող գործոններ:
12.Ծնողը որպես երկրորդ ուսուցիչ:
13.Ընտանիքի ֆինանսական ապահովվածության ազդեցությունը աշակերտի ուսումնական որակների վրա:
14.Աշակերտների կողմից բացահայտված ուսումնական պրոցեսները խանգարող մեխանիզմների բացահայտումը:
15.Աշակերտների ծանրաբեռնվածության ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա:
16.Փողոցային բարքերի դրսևորումները ընտանիքում և դպրոցում:
17.Լավ դպրոց, լավ աշակերտ:
18.Ուսուցման պայմանների ազդեցությունը ուսուցման որակի վրա:
19.Աշակերտ-դպրոցի տնօրենության հետ հանդիպում, զրույց-քննարկումներ:
20.Ազգային ավանդույթների ազդեցությունը կրթության վրա:

21.Դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանումը որպես առաջնային խնդիր:
22.Նյութապաշտությունը որպես վնասակար սովորույթ:
23.Հայոց բանակի կարևորությունը մեր անկախության պահպանման գործում:
24.Առողջ ապրելակերպը նպաստում է կրթության որակի բարձրացմանը:
25.Ինքնատիրապետումը որպես մարդկային որակական հատկանիշ:
26.Սովորենք գնահատել իրական գեղեցկությունը:
27.Համացանցը պետք է լինի անվտանգ:
28.Ո՞վ է իսկական ընկերը:
29.Ինքնազնահատում:
30.Ես գտնվում եմ վտանգավոր տարիքում:
31.Ինչպե՞ս ճիշտ պատրաստվել քննություններին:
32.Ո՞րն է իմ ընտրած մասնագիտությունը:
33.Ես սիրում եմ իմ դասարանը:
34.Հայաստանը իմ հայրենիքն է:

*Ծնողական ժողովներ*

| Անցկացման օրը | Քննարկվող հարցերը | Համառոտ բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 12.09.2023թ․ | 1.Համավարակի պայմաններում ուսումնական գործընթացի կազմակերպման, աշակերտների պատշաճ ձևով դպրոց ներկայանալու մասին: | Ներկայացվեց ուղեցույցով սահմանված կանոնները, խոսվեց այդ կանոնների ամենօրյա պահպանմամբ աշակերտների դպրոց ներկայանալու մասին: | Ծնողները խոստացան լինել հետևողական և ամենօրյա վերահսկողություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սահմանել: |
| | 2.Անհարկի բացակայությունների, ուշացումների, կարգապահական հարցերի մասին: | Դասղեկը տեղեկացրեց, որ ամենօրյա վերահսկողություն է սահմանվելու բացակայությունների և ուշացումների նկատմամբ,բացառեց հիվանդ սովորողների մուտքը դպրոց՝ հավելելով համապատասխան բժշկական տեղեկանքի առկայությունը: | Որոշեցին հավուր պատշաճի հետևել սովորողների առողջությանը: |
| | 3.Ծխ կազմի ընտրության մասին: | Ընտրեցին Ծխ կազմ՝ կազմված 4 անդամներից: | Որոշեցին ակտիվորեն համագործակցել և հաղորդակից լինել դպրոցական կյանքին; |

| | Դաստիարակչական ժամի թեմատիկա | |
|---|---|---|
| | | |
| 2 | Անկախություն, վեհ գաղափար | |
| 3 | Գիտելիքն ուժ է | |
| 4 | Ինչպես օգնել մարդկանց | |
| 5 | Ընտանեկան ավանդույթներ | |
| 6 | Խոսք ես տվել,կատարիր | |
| 7 | Իսկական ընկեր | |
| 8 | Կարողանանք լսել միմյանց | |
| 9 | Փրկենք երկիր մոլորակը | |
| 10 | Լինենք բարեկիրթ | |
| 11 | Բարեկամությունն սկսվում է ժպիտից | |
| 12 | Ճանաչիր քո հայրենիքը | |
| 13 | Մեր հերոս նախնիները | |
| 14 | Առաջին կիսամյակի ամփոփում | |
| 15 | Մարդկային արատներ: | |
| 16 | Հայոց բանակն անպարտ է ու ամուր | |
| 17 | Բարոյական արժեքներ | |
| 18 | Գիրքը իմ բարեկամն է | |
| 19 | Ինչպես գնահատել գեղեցիկը | |
| 20 | Լինենք հարգալից | |
| 21 | Դաստիարակչական և վարքի ճիշտ դրսևորման կանոնները | |
| 22 | Պահպանենք բնությունը | |
| 23 | Օրը սկսենք <<բարև>>-ով | |
| 24 | Նորագույն տեխնոլոգիաներ | |
| 25 | Հայոց Ցեղասպանություն: | |
| 26 | Ուսուցման պայմանների ազդեցությունը ուսուցման որակի վրա | |
| 27 | Ազգային ավանդույթների ազդեցությունը աշակերտի վրա | |
| 28 | Փողոցային բարքերի դրսևորումները ընտանիքում և դպրոցում | |
| 29 | Ես սիրում եմ իմ դասարանը | |
| 30 | Երկրորդ կիսամյակի ամփոփում | |